ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«16» օգոստոսի 2024թ. N ՄՈ/402-Ա

ք. Արմավիր

«ՄԵԾԱՄՈՐԻ N 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի օգոստոսի 14-ի N ՄՈ/396-Ա և N ՄՈ/397-Ա որոշումները, «Մեծամորի N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ն.Ալավերդյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Մեծամորի N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Շաքե Հարությունյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ն.Ալավերդյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը (գլխավոր մասնագետ Ա. Համբարձումյան)՝ աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

ԽԱՉԱՏՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետի

2024 թվականի Օգոստոսի 16-ի

N ՄՈ/402 -Ա որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ն.Ալավերդյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

Անդամներ՝

Ս.Ղուկասյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Ջ. Եղոյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Հանձնող՝

Նունե Գևորգյան - «Մեծամորի N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նախկին տնօրեն

Ընդունող՝

Սյուզաննա Բարսեղյան - «Մեծամորի N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

15.08.2024

VERIFIED OCSP 15.08.2024 16:49:19 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023